

## Առաջնագծին օգնությունները շարունակվում են

19.04.2016

Ապրիլի 19-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի մոտ տեղի ունեցավ աշխատանքային հերթական խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեց սահմանին աջակցություն ցուցաբերելու հետ կապված խնդիրներ: Մարզպետն իր խոսքում նշեց, որ մարզի կազմակերպությունները շարունակում են դրամական փոխանցումներ կատարել „Արցախի օգնության հիմնադրամին,, բազմաթիվ կազմակերպություններ էլ տարբեր առաջարկությունների միջոցով իրենց պատրաստակամությունն են հայտնում օգնել առաջնագծում կանգնած սահմանապահներին: Խորհրդակցության ընթացքում քննարկվեց մարզի Ծովագյուղ, Ձորագյուղ, Երանոս, Վարդաձոր, Ծակքար, Լիճք, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Կարմիրգյուղ, Գանձակ և Սարուխան համայնքների ղեկավարների նախաձեռնությամբ և համայնքապետարանների միջոցներով առաջնագծի զինձառայողներին ուղարկվող օգնության կազմակերպման և տեղափոխման հետ կապված հարցեր: Հերթական անգամ համայնքապետարանները առաջնագիծ կուղարկեն առաջին անհրաժեշտության պարագաներ: Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնությամբ այսօր սահմանապահ դիքեր կուղարկվի ռետինե կոշիկների և գուլպաների առաջին խմբաքանակը: Միանալով մարզի ղեկավարի նախաձեռնությանը, նույն պարագաների հաջորդ խմբաքանակը առաջնագիծ կուղարկվի „Հացառատի զարգացման,, բարեգործական հիմնադրամի կողմից: Խորհրդակցության ընթացքում Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը ևս մեկ անգամ համայնքների ղեկավարներին հորդորեց ուշադրության կենտրոնում պահել և ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն՝ իրենց համայնքներից առաջնագծում զոհված և վիրավոր զինձառայողների և կամավորների ընտանիքներին՝ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և այլ բնույթի հարցերում: Համայնքների ղեկավարները կարևորեցին սահմանին օգնություն ցուցաբերելու գործընթացը: „ Հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի ապրիլի 14-ի մարզի խորհրդի նիստի համապատասխան առաջարկությունը, կապված առաջնագծում զինվորին օգնություն ցուցաբերելու շարունակական գործընթացի հետ, մենք նախաձեռնեցինք և առաջիկա օրերին սահմանապահ դիքեր ուղարկվող բեռնատարը կտեղափոխի մի շարք անհրաժեշտ պարագաներ սննդի և այլ նյութերի տեսքով: Ճիշտ է բանակն այսօր չունի դրա անհրաժեշտությունը, բայց դա մեր պարտքն է, որը կատարում ենք ամենայն պատասխանատվությամբ և սիրով,, - իր խոսքում նշեց Գանձակ համայնքի ղեկավար Վանիկ Հարությունյանը: